

ՀԱՄԱՌԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀՀ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Ինտեգրացիայի գործընթացը գրեթե բոլոր նորանկախ պետությունների հասարակական-քաղաքական տարբեր շրջանակներում ու մակարդակներում առաջ է բերել միջազգային կազմակերպություններին դրանց անդամակցության գործընթացների, սպասելիքների ու հետևանքների վերաբերյալ ակտիվ բանավեճեր: Այս առումով բացառություն չեն նաև հարավ-կովկասյան պետությունները: Այսօր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի վերլուծաբանները ոչ միանշանակ, հաճախ նաև հակադիր դիրքորոշումներ են արտահայտում տարբեր եվրոպական կառույցների հետ մերձեցման թույլատրելի աստիճանի վերաբերյալ: Բնական է, որ միջազգային կազմակերպություններին անդամակցությունը միշտ ենթադրում է որոշ խնդիրների լուծման լիազորությունների փոխանցում այդ կազմակերպությունների ղեկավար կենտրոններին: Այսինքն, այստեղ գործ ենք ունենում ինքնիշխանության որոշակի կորստի հետ, ինչն առաջ է բերում ինտեգրացիայի խորացման թույլատրելի աստիճանի հստակեցման անհրաժեշտություն: Հետազոտությունների արդյունքում նշված հարցի շուրջ տեսակետները հնարավոր է եղել խմբավորել 3 հիմնական խմբերում¹.

- *Եվրոպական կառույցների հետ մերձեցումը հնարավորություն կընձեռի այնտեղ՝ «տեղում», կիրառելով եվրոպական օրենքներն ու կանոնները, հաղթահարել անլուծելի խնդիրները,*
- *Եվրոպական էլիտար կառույցների լիիրավ անդամ դառնալու և եվրոպացիներին չժանրաբեռնելու նպատակով անհրաժեշտ է նախապես կարգավորել առկա խնդիրները,*
- *չնայած թերությունների առկայությանն ու եվրոպական չափորոշիչներին ոչ լիակատար համապատասխանելու փաստին՝ շարժումը դեպի Եվրոպա արդեն*

¹Three attempts of European integration, Investigative Journalists' Research Center Region, Yerevan, 2005, p.7.

մեծ ձեռքբերում է, քանի որ այն խթան է հանդիսանում ներքաղաքական ցուցանիշները բարելավելու համար:

Այսպիսով, վերլուծաբանների արդյունքները վկայում են, որ բոլոր դեպքերում էլ եվրոպայի հետ մերձեցումից, ընդհանուր առմամբ, ակնկալվում են դրական ներքաղաքական տեղաշարժեր: Սակայն եթե ելակետային ենք ընդունում ի սկզբանե նորանկախ պետություններում առկա պայմանները, որոնք խորհրդային տարիներից իբրև ժառանգություն ստացել էին բնականոն քաղաքական հարաբերությունների մշակույթի, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների բացակայությունը, ինչին հետագա տարիներին ավելացան տնտեսական անկման ու գրեթե լիակատար քայքայման գործընթացները, ապա, կարծում ենք՝ իսկապես, եվրոպական պետությունների հետ հարաբերությունների հաստատումը թե երկկողմ մակարդակով, թե միջազգային կառույցների շրջանակներում չէր կարող չունենալ որոշակի դրական հետևանքներ: Այնուամենայնիվ, անդամակցությունից բխող ու հասարակական կյանքի ոչ բոլոր բնագավառներին վերաբերող արդյունքներն են, որ միանշանակորեն դրական են եղել՝ զոնե Չայաստանի համար, և այս հարցում հայաստանյան քաղաքական ուժերը, որոնք ներկայացնում են թե իշխանության, ու թե ընդդիմադիր դաշտի տեսակետները, համակարծիք են գտնվել: Չետաքննող լրագրողների «Ուեզիոն» կենտրոնը, ՀՀ իշխանական և ընդդիմադիր դաշտերի ներկայացուցիչներին առաջադրելով ՀՀ համար եվրոպական կառույցներին ինտեգրման նշանակության հարցը, ստացել է հետևյալ պատասխանները²: Նրանք բոլորը նշել են, որ եվրոպական կառույցների հետ Չայաստանի առավել սերտ հարաբերությունները կհանգեցնեն ժողովրդավարության, իրավական պետության, քաղաքացիական հասարակության ու տնտեսության զարգացմանը, անվտանգության հիմնախնդիրների լուծմանը՝ հիմք ընդունելով հասարակական ու քաղաքական հարաբերություններում եվրոպական չափանիշների ու արժեքների ներդրումն ու պահպանումը: Միաժամանակ սակայն, քանի որ ինտեգրացիան, ինչպես նշեցինք, ենթադրում է ազգային ինքնիշխանության որոշակի թուլացում ու վերազգային կառույցներին որոշումների ընդունման իրավունքի փոխանցում՝ եվրոպական գործընթացների խորացմանը զուգընթաց համաեվրոպական մարմիններին փոխանց-

² Հարցն ուղղվել է ԱԺՍ նախագահ Վ.Սանուկյանին, «Օրինաց երկիր» կուսակցության փոխնախագահ Մ.Շահգեղյանին, ՀՀԳ բյուրոյի անդամ Վ.Չովհաննիսյանին, ՀՀԿ փոխնախագահ Տ.Թորոսյանին, ՄԱԿ նախագահ Գ.Արսենյանին, ՀԺԿ նախագահ Ա.Դեմիրճյանին, ՀԳԿ նախագահ Ա.Գ.Սարգսյանին: - տես՝ Three attempts of European integration, Investigative Journalists' Research Center Region, Yerevan, 2005.

վող լիազորությունների ծավալի աստիճանական աճով, կարծում ենք, որ բարձրագույն արժեք պետք է մշտապես լինի անկախությունը, որը երբևէ չի կարող փոխանակվել որևէ այլ արժեքով: Սա էլ ավելի է կարևորվում ԳԳ-ում և սփյուռքում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների լույսի ներքո, որոնք վկայում են, որ հարցվածների 80%-ը ազգային պետության ինքնուրույնության բարձր աստիճանը, այն է՝ առանցքային որոշումների ընդունման ինքնուրույնությունը դասում են աշխարհասփյուռ հայության միասնության առանցքային երաշխիքների թվին³:

Ինտեգրացիայի ներպետական հետևանքների խնդրի օբյեկտիվ վերլուծությունը, ինչպես և յուրաքանչյուր այլ խնդրի, պահանջում է հարցը դիտարկել հնարավոր դրական ու բացասական կողմերից: Այստեղ կարևոր ենք համարում նշել, որ հետանդամակցային շրջանի կարճ տևողությունը նշված կառույցների շրջանակներում մի շարք նախաձեռնություններին դեռևս թույլ չի տվել ստանալ գործնական կիրառում, առավել ևս, ունենալ շոշափելի ազդեցություններ: Նախ և առաջ, Եվրոպայի խորհրդում և ԵԱԳԿ-ում ԳԳ գործունեության ներպետական հետևանքների վերլուծությանն առավել համակարգված բնույթ տալու համար նպատակահարմար ենք գտնում դրանք բաժանել ըստ ոլորտների՝ միաժամանակ հաշվի առնելով դրանց փոխկապվածությունն ու փոխալայնանավորվածությունը: Ըստ այդմ, կարելի է պայմանականորեն առանձնացնել պետության քաղաքական դաշտը, սոցիալ-տնտեսական, հասարակական ու մշակութային բնագավառները: Եվ քանի որ առավել կարևորը քաղաքական ոլորտն է, որը հանդես է գալիս մնացած բնագավառները համակարգող ու դրանց գործունեությունը պայմանավորող գործառույթներով, ապա փորձենք վերհանել ու գնահատել եվրոպական կառույցներին ԳԳ անդամակցության արդյունքում քաղաքական դաշտի վերափոխումները:

Քանի որ քաղաքական ինստիտուտների ու հարաբերությունների համակարգի վրա վերոնշյալ կազմակերպություններում ԳԳ ընդգրկման առավել ակնհայտ ազդեցությունները կարող ենք տեսնել հատկապես *ընտրական ոլորտում, դատական ու տեղական ինքնակառավարման համակարգերում և կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում*, հետևապես՝ դրանք դիտարկենք առավել մանրամասնորեն:

Անժխտելի փաստ է, որ միջազգային չափանիշներին համապատասխան ընտրությունների անցկացումը յուրաքանչյուր երկրում ժողովրդա-

³ տես՝ Գ.Ա. Ахинов, "Армения в условиях неопределенности", обзор по материалам сценарных упражнений проекта "Армения – 2020", журнал "Россия в глобальной политике", N4, 2004г.

վարական կառույցների ու հարաբերությունների՝ առկայության հիմնական երաշխիքն է: Կարծում ենք, որ առանց դրա միջազգային հանրությունը լուրջ չի կարող ընդունել ՀՀ հայտարարությունները եվրոինտեգրման կուրսի առաջնահերթության վերաբերյալ:

ՀՀ ընտրական օրենսդրության բարելավման գործում դժվար է գերազանհատել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ու ԵԽ դերը, քանի որ նրանց կողմից ներկայացվել ու քննարկվել են ՀՀ ընտրական օրենսգրքի ու ընտրական վարչարարության կատարելագործման ԵԱՀԿ/ԵԽ համատեղ հանձնարարականները: ԵԽ-ին ՀՀ անդամակցությանը հաջորդած 4 տարիների ընթացքում ԵԽ Վենետիկի հանձնաժողովն ու ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ընտրական օրենսդրության բարեփոխումների շուրջ ՀՀ-ում կազմակերպել են մի շարք կլոր սեղաններ, և այդ կառույցների փորձագետները պարբերաբար մասնագիտական եզրակացություններն են ներկայացրել ընտրական համակարգում անհրաժեշտ բարելավումների վերաբերյալ, ինչն այսօր ուղեցույց է հանդիսանում ՀՀ պետական մարմինների, մասնավորապես, օրենսդիր իշխանության համար ընտրական գործընթացը կարգավորող իրավական դաշտը ԵԱՀԿ ու ԵԽ չափորոշիչների հետ ներդաշնակեցնելու գործընթացում: Բացի այդ Հայաստանին՝ որպես անդամ-պետությանը, մեծ օժանդակություն է ցուցաբերվել նաև ընտրությունների գործնական կազմակերպման առումով, օրինակ, դիտորդական առաքելությունների կատարած աշխատանքի տեսքով: Կարծում ենք, որ ընտրական ոլորտի իրականացված ու հետագա բարեփոխումների արդյունավետության միակ իրական ցուցանիշ կարող են լինել հետագա ընտրությունների՝ ժողովրդավարության չափանիշներին համապատասխան անցկացումը, ինչի դեպքում միայն կարող ենք փաստել եվրոպական քաղաքական ավանդույթների արմատավորման մասին:

Հաջորդ և կարևորագույն ոլորտներից մեկը, ուր հսկայական աշխատանք է կատարվել՝ ԵԱՀԿ ու Եվրոպայի խորհրդի պահանջներին այն ներդաշնակեցնելու համար, դատական համակարգն է: Նշենք, որ թե դատական համակարգի օրենսդրական դաշտի զարգացման, թե գործնական ծրագրերի ու նախագծերի իրականացման պահանջն առաջ է քաշել որոշակի ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտություն:

Նախ նշենք, որ դառնալով ԵԽ ու ԵԱՀԿ անդամ՝ Հայաստանի համար հրատապ խնդիր դարձավ դատավորների կողմից ազգային օրենսդրության և միջազգային պայմանագրերի կիրառման ոլորտում անհրաժեշտ գիտելիքների ձեռք բերումը: Այս նպատակով է ստեղծվել դատական ուսումնական կենտրոնը, որը կոչված է ձևավորել ուսուցման ու վերապատրաստման նոր համակարգ,

դատական աշխատողների մոտ ձևավորել դատավարական նոր գործելակերպ, նպաստել նրանց գիտելիքների կատարելագործմանն ու մասնագիտական հմտությունների զարգացմանը, և որը սկսած դեռ 2001թ.-ից բավական արդյունավետ գործունեություն էր ծավալել:

Ինչ վերաբերում է քրեական պատիժների իրականացման համակարգին, պապ ԳԳ կառավարությունը ներկայումս հաստատել է այդ համակարգի բարեփոխումների եռամյա ծրագիրը, որի դրույթների կենսագործմանն էլ հիմնականում ուղղված են ԳԳ Արդարադատության նախարարության դատաիրավական բարեփոխումների վարչության աշխատանքները: Այժմ արդեն ակնհայտ ենք համարում դատապարտյալների ու կալանավորված անձանց պահելու պայմանների բարելավմանը, դատապարտյալների ուղղմանը նպաստող պայմանների ստեղծմանը, սոցիալական վերականգնմանը, ինչպես նաև քրեակատարողական ծառայության անձնակազմի կողմից առօրյայում դատապարտյալների նկատմամբ վերաբերմունքի միջազգային չափանիշների կիրառումն ընդլայնելու նպատակով վերապատրաստման ու այլ դասընթացների կազմակերպմանն ուղղված աշխատանքների բավական հաջողված ու արդյունավետ լինելը⁴:

Դատական համակարգում կատարած դրական տեղաշարժերի շարքում առանձնահատուկ կերպով պետք է նշել նախկին ազատագրված անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում իշխանությունների գործունեությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ մարդկանց ինտեգրացումը հասարակության մեջ խիստ անհրաժեշտ է:

Դաշորդ ոլորտը, որը պահանջում է անհետաձգելի կարգավորում, տեղական ինքնակառավարման համակարգն է, ինչը երկրում հանրային կառավարման արդյունավետությունն ապահովելու կարևորագույն նախապայմաններից մեկն է: Այստեղ գործընկերային և արդյունավետ համագործակցություն է հաստատվել ոչ միայն ԵԽ-ի, այլև ՄԱԿ-ի, Գերմանական տեխնիկական համագործակցության կազմակերպության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակա-

⁴ Այսպես, 2003թ. ընթացքում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ վարչությունը կազմակերպել է քառափուլ դասընթացներ «Արույան» քրեակատարողական հիմնարկի աշխատողների համար «ԳԳ քրեական օրենսգրքի անչափահասների և կանանց իրավունքների քրեաիրավական պաշտպանությանն առնչվող դրույթները» թեմայով: Այդ դասընթացները վարել են վարչության աշխատողները և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից հրավիրված փորձագետները: Աշխատանքներ են իրականացվում նաև քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժատեսակների (մասնավորապես կալանքի, ուղղիչ աշխատանքների, հանրային աշխատանքների) կատարման համար համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծելու ուղղությամբ: - տես՝ Դայաստանում Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի լրատու, N2, 2004թ.:

լության, Համաշխարհային բանկի ու այլ հեղինակավոր կազմակերպությունների հետ, որոնք ցուցաբերում են ֆինանսական, տեխնիկական և մասնագիտական համապատասխան աջակցություն:

Այնուամենայնիվ, չներժեռվ Հայաստանի՝ որպես էս անդամ-պետության իշխանությունների ներդրած ջանքերը այդ համակարգի զարգացման ուղղությամբ՝ թե էս պահանջներին օրենսդրական դաշտի համապատասխանեցման, և թե կառուցվածքային ու այլ բարեփոխումների առումով, միաժամանակ անհերքելի ենք համարում, որ առայսօր այն մնում է ՀՀ ամենախոցելի տեղերից մեկը, որի վերաբերյալ եվրոպայի խորհուրդն ամենայն խստությամբ շարունակում է իր պահանջները ներկայացնել՝ մասնավորապես, սահմանադրական բարեփոխումների ընդունման ու 2005թ. ՏԻՄ ընտրությունների համատեքստում:

Կարծում ենք, որ այս բնագավառում եվրոպայի խորհրդի սահմանած պարտավորությունների լիակատար կատարումը կարող է խթանել ապակենտրոնացման գործընթացը, բարձրացնել տեղական ու տարածքային ինքնակառավարման մարմինների աշխատանքի արդյունավետությունն ու, ընդհանուր առմամբ, ապահովել ժողովրդավարության արմատավորումը տեղական և տարածքային մակարդակներում: Այսպիսով, 2002թ. հունվարին որպես էս առջև ստանձնած պարտավորություն՝ ՀՀ-ն վավերացրել էր Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան, որի դրույթների ու սահմանած սկզբունքների կիրառման դեպքում իշխանությունները կերաշխավորեն տեղական իշխանությունների քաղաքական, վարչական ու ֆինանսական ինքնավարությունը: Իհարկե, պետական մակարդակով այս ուղղությամբ աշխատանքներ տարվում են: ՀՀ Ազգային ժողովում նույնիսկ ձևավորվել է հատուկ աշխատանքային խումբ, որը կոչված է ՀՀ ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել Խարտիայի պահանջներին: Այդ նպատակով դեռ 1996թ. ընդունված Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը 2002թ. լրամշակվեց՝ տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքներին այն առավել համապատասխանեցնելու նպատակով⁵:

⁵ Արդյունքում այն ներկայումս սահմանում է երաշխիքներ, որոնք, օրինակ, տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահում են այնպիսի լիազորություններ, որոնք չունեն պետական մարմինները: Բացի այդ ամրագրվում է պետական իշխանության մարմիններից դեպի տեղական ինքնակառավարման մարմիններ լիազորությունների ու ֆինանսական ռեսուրսների ապակենտրոնացման սկզբունքը, վերջիններիս կենսական շահերի ու սեփականության դատական պաշտպանության, պետական բյուջեից թերի զարգացած տեղական ինքնակառավարման մարմիններին ֆինանսական աջակցության սկզբունքները, ՏԻՄ անկախությունն ու պատասխանատվությունը՝ օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս:

Որպես ապակենտրոնացման ուղղությամբ կատարված էական քայլ ենք համարում, օրինակ, այն, որ ընդլայնվել են ՏԻՄ իրավասությունների շրջանակները հարկային վարչարարության կատարելագործման տեսանկյունից:

Միաժամանակ նշված ոլորտի իրավական կարգավորման մեխանիզմները չեն սահմանափակվում միայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով: Ընդունվել են մի շարք այլ օրենքներ ու ենթօրենսդրական ակտեր (օրինակ, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը), որոնք, առնվազն իրավաբանորեն, հստակորեն ապահովում են տարածքային կառավարման մարմինների գործառույթների, տեղական ինքնակառավարման մարմինների ու կենտրոնական կառավարման ենթաբաժանմունքների (նախարարությունների) հետ նրանց հարաբերությունների հստակությունը: Դրանցով նախատեսվում է Երևանը ճանաչել համայնք, իսկ քաղաքապետը պետք է լինի ոչ թե նշանակովի, այլ ընտրովի: Հակառակ դեպքում գործ կունենանք մի իրավիճակի հետ, որը երբևէ զոյություն չունեցող պրակտիկա է և որևէ ընդհանրություն չունի տեղական ինքնակառավարման հետ: Կարծում ենք, որ եթե Երևանում, ուր բնակվում է ՀՀ բնակչության համարյա կեսը, չլինի տեղական ինքնակառավարում, ապա կարելի է համարել, որ այն զոյություն չունի ողջ երկրում:

Ամենբերելի է, որ նույնիսկ ամենափոքեալական իրավական դաշտի ու բարեփոխումներ իրականացնելու նպատակների առկայությունը, լինելով անհրաժեշտ պայման, սակայն դեռ չի նշանակում տվյալ ոլորտում զարգացման ապահովում: Այստեղ կանգնում ենք առկա օրենսդրության պահանջների պատշաճ իրականացման խնդրի առջև: Այս նպատակն է հետապնդել Ազգային վերապատրաստման ռազմավարության մշակումը, որը կարելի է ամվանել տեղական ինքնակառավարման բարեփոխման ընթացքում իշխանությունների գործունեության կարևորագույն արդյունքներից մեկը:

Եթե փորձենք ներկայացնել հետցած կարևորագույն խնդիրները, ապա դրանց շարքում միանշանակորեն պետք է նշվի նաև կոռուպցիայի դեմ պայքարի հիմնահարցը: Անկախ նրանից, թե որոնք են այդ «չարիքի» արմատները (այն կարելի է դիտարկել թե որպես հետխորհրդային ժառանգության բաղկացուցիչ, թե, պարզապես, որպես ցանկացած պետությանը բնորոշ հատկանիշ, որն անհնար է ի սպառ արմատախիչ անել), սակայն, գաղտնիք չէ, որ այն առկա է ոչ միայն պետական իշխանական շրջանակներում՝ ընդգրկելով բոլոր մակարդակները, այլև տարբեր դրսևորումներով՝ հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Դրա արմատներն այնքան խորն են, որ հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման պայմաններում էլ կոռուպցիայի դեմ պայքարի

հարցերով զբաղվող միակ միջազգային ոչ-կառավարական կազմակերպության՝ Տրանսփարենսի ինտերնեյշնլի կողմից պատրաստված 2004թ. տարեկան զեկուլյցի արդյունքներով, Հայաստանը կոռուպցիայի մակարդակի տեսանկյունից ստացել է 3.1 գնահատականը՝ 146 երկրների շարքում զբաղեցնելով 82-րդ տեղը⁶։

Խնդրի լուծման նկատմամբ համակարգային մոտեցման անհրաժեշտությունը գիտակցում են իշխանության ամենավերին մակարդակներում և դրա մասին հնչեցնում աշխարհի ամենահեղինակավոր կազմակերպությունների ամբիոններից։ Ինչպես 2004թ. հունիսի 23-ին ԵԽԽՎ լիազումար նստաշրջանում ունեցած ելույթում նշեց ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը, կոռուպցիայի դեմ պայքարը դիտելով որպես կարևորագույն քայլ դեպի արդյունավետ ժողովրդավարություն՝ պետք է հնարավորինս շտապ ձեռնամուխ լինել համակարգային փոփոխությունների՝ նախ և առաջ վերացնելով կոռուպցիայի աղբյուրները։

Սակայն երբեմն տպավորություն է ստեղծվում, թե կոռուպցիայի դեմ պայքարը ստիպողաբար ներմուծվում է արտաքին ակտորների՝ ԵԱՀԿ, ԵԽ կողմից՝ որպես շարունակական անդամակցության, իսկ Համաշխարհային բանկի և այլ օտարերկրյա դոնորների կողմից՝ որպես ՀՀ-ում իրականացվող ծրագրերի ֆինանսավորման անհրաժեշտ պայման։ Կարծում ենք, որ նույն եզրակացության կարելի է հանգել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության վերլուծության արդյունքում։

Ըստ էության, կոռուպցիայի դեմ պայքարի պետական ռազմավարությունը պետք է հիմք հանդիսանա նշված ոլորտում իշխանությունների գործունեության, այսինքն օրենքների և կանոնակարգերի ընդունման և փոփոխման, վարչական, դատաիրավական համակարգերի բարեփոխման և այլնի համար։ Ծրագրի մեծագույն թերություններից, կարծում ենք, այն է, որ նրանում հիմնականում նախատեսված է նորմատիվ-իրավական միջոցառումների իրականացում, այսինքն՝ օրենքների նախագծերին վերաբերող գործողություններ։ Ծրագիրը նաև չի պարունակում արդյունավետության չափանիշներ, որևէ քանակական ցուցանիշներ, որոնք հնարավորություն կտան գնահատել ծրագրի ընթացքն ու դրա արդյունքները, կոռուպցիայի ծավալների փոփոխության աստիճանը։ Բացի այդ նկատենք, որ ծրագրի մշակմանը չեն նախորդել ՀՀ-ում «կոռուպցիոն շուկայի» և նրա կառուցվածքի գիտական հետազոտություններն ու վերլուծությունները, ինչի արդյունքում հնարավոր կլիներ գիտա-

⁶ Կոռուպացվածության աստիճանը գնահատվել է 0-ից 10 սանդղակով, որտեղ 10-ը համապատասխանում է կոռուպցիայի ամենաստորին մակարդակին։

կանորեն հիմնավորել ծրագրի տևողությունը, փուլերը, առաջնայնությունները, ֆինանսական միջոցների, կազմակերպական միջոցառումների հարցերը: Ներկայումս, երբ դեռ գործընթացը նոր է սկսված, արդեն չի ապահովվում նաև բուն պայքարի գործընթացի թափանցիկությունը:

Միաժամանակ փաստենք, որ Հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների քառամյա ծրագիրն, անկասկած, ունեցել է նաև իր դրական արդյունքները: Քանի որ ծրագրի իրականացումը նախատեսված է 2007թ. վերջին և հիմա արդեն ակնկալել դրա շոշափելի արդյունքները կլիներ, թերևս, անիրատեսական, այնուամենայնիվ, այսօր արդեն ականատես ենք լինում որոշակի հուսադրող փոփոխությունների: Այնուամենայնիվ, որպես կարևոր ձեռքբերում անհրաժեշտ ենք համարում նշել նաև կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով ձևավորված ինստիտուցիոնալ հիմքը, որը կազմում են վարչապետի գլխավորությամբ գործող Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, նախագահի խորհրդականի գլխավորությամբ գործող մոնիտորինգի հանձնաժողովը, Գլխավոր դատախազության կոռուպցիայի դեմ պայքարի բաժինը, ՀՀ նախագահի խորհրդականը՝ փոքր աշխատակազմով:

Բացի պետական շրջանակներից, կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավվել են նաև հասարակական ոլորտի սուբյեկտները⁷, որոնց գործունեությունը պետական օղակների համեմատությամբ, կարծում ենք, ունի առավելապես պրակտիկ ուղղվածություն, քանի որ պետական օղակները, նախ և առաջ, ընդգրկված են այդ գործունեության նորմատիվ-իրավական հիմքի ապահովման գործընթացում: Այսպես, Հայաստանում ստեղծվել է հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիա, որը համագործակցում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ: Իր հերթին ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը, ընդլայնելով հասարակական սուբյեկտների, ներառյալ՝ հասարակական կազմակերպությունների հետ իր կապերը, աշխատում է նրանց առավել ներգրավել կոռուպցիայի դեմ պայքարում: Այսպես, «Հակաստվեր» հասարակական կազմակերպության հետ գրասենյակը քննարկել է հակակոռուպցիոն պայքարում ՁԼՄ-ների ակտիվ մասնակցության հարցերին առնչվող ծրագրի մանրամասները, իսկ «Աքիլլես» հասարակական կազմակերպության հետ համագործակցությունն առնչվում է ճանապարհատրանսպոր-

⁷ Մոնիտորինգի հանձնաժողովում արդեն իսկ ստեղծվել են 10 աշխատանքային խմբեր, որոնց աշխատանքներում ներգրավվել են 128 հասարակական կազմակերպություններ: - տես՝ Տեղեկանք ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ, էլեկտրոնային էջ - http://www.gov.am/armversion/premier_2/pdf/korup_hashvetvutun.pdf.

տային ոստիկանության համակարգի կատարելագործմանը՝ այս ոլորտում կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով: Երիտասարդական կազմակերպությունները ևս արդյունավետ հարաբերություններ են հաստատել ԵԱԿԿ երևանյան գրասենյակի հետ՝ կոռուպցիայի հաղթահարման գործունեության մեջ երիտասարդներին, և մասնավորապես ԳԳ հեռավոր շրջանների երիտասարդությանը ներգրավելու համար:

Կարծում ենք, որ կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացը ամբողջական չի կարող լինել, եթե բացակայեն հակակոռուպցիոն միջոցառումների, ընդունված չափորոշիչների կիրառման վերահսկման մեխանիզմները: Արա առնչությամբ մեծ փորձառություն ունի, հատկապես Եվրոպայի խորհուրդը, որն իր համակարգում ստեղծել է անդամ ու ոչ անդամ պետություններում համապատասխան չափանիշների կիրառումը վերահսկող մեխանիզմ՝ GRECO-ն (Group of States Against Corruption՝ Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ)⁸: Հայաստանը GRECO-ին միացել է 2004թ. հունվարին, ուստի սահմանված ժամանակահատվածում, համաձայն գործող ընթացակարգերի, պետք է անցնի գնահատման մի քանի փուլ: Ազգային զեկույց կազմելու նպատակով խումբը ԳԳ իշխանություններին ներկայացրել է համապատասխան հարցաշարեր, որոնք հնարավորություն են տվել հստակեցնել կոռուպցիոն ռիսկերին առավել ենթակա ոլորտները ու ներկայացնել դրանց վերացմանը միտված համապատասխան պահանջներ: ԳԳ իշխանություններն իրենց հերթին ընդունել են, որ կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը հնարավոր է միայն մրցակցային դաշտի ստեղծման, կառավարության գործունեության կանխատեսելիության, ընթացակարգերի պարզեցման, թափանցիկության ու դրա արդյունքում հասարակական վերահսկողության ապահովման պայմաններում:

Կոռուպցիոն դրսևորումների մի մասի դեմ պայքարի միջոց է հանդիսանում նաև ԳԳ մասնակցությունը Եվրոպայի խորհրդի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կոմիտեի աշխատանքներին: Նշված կոմիտեն 2004թ. իր յուրահատուկ մեթոդաբանության կիրառմամբ արդեն հաստատել է ԳԳ առաջին փուլի գնահատման զեկույցը, որի արդյուն-

⁸ Համաձայն Կանոնադրության, GRECO-ի նպատակն է բարելավել իր անդամների կոռուպցիայի դեմ պայքարելու ներուժը՝ նշված ոլորտում պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման վերահսկման միջոցով: Այսպիսով, այն հնարավորություն է ընձեռում հայտնաբերել կոռուպցիայի դեմ պետական մեխանիզմներում առկա թերությունները, ինչպես նաև խթանել այս ոլորտի անհրաժեշտ օրենսդրական, ինստիտուցիոնալ ու գործնական բարեփոխումները:՝ տես՝ Հայաստանում Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի լրատու, N2, 2004թ.:

քում որոշ հանձնարարականներ են արվել ՀՀ իշխանություններին: Այդ հանձնարարականների կատարման նպատակով ՀՀ նախագահի կողմից ստեղծվել է միջկառավարական կոմիտե, որն արդեն իսկ մշակել է անհրաժեշտ միջոցառումների իրականացման ժամանակացույցը: Այդ միջոցառումների պատշաճ իրականացման պարագայում, կարծում ենք, պետական մարմինների ու պաշտոնյաների գործունեությունը կդառնա ավելի թափանցիկ, ինչը կնվազեցնի կոռուպցիոն դրսևորումների դեպքերը:

Այսպիսով, վերոնշյալից կարող ենք եզրակացնել, որ, իսկապես, ՀՀ անդամակցությունը եվրոպական կառույցներում և վերջիններիս օժանդակությունը ՀՀ իշխանություններին անհետևանք չի անցել: Թեև կատարված բարեփոխումների էությունն առավելապես հետագա գործնական փոփոխությունների նորմատիվ-իրավական հիմքի ստեղծումն է, սակայն այն զուգորդվում է նաև գործնական միջոցառումների իրականացմամբ, որոնց վերաբերյալ եւՅԿ և Եվրոպայի խորհուրդը հայտնել են իրենց գոհունակությունը՝ շարունակելով իրենց աջակցությունը՝ ՀՀ քաղաքական ոլորտում եվրոպական չափորոշիչներ հաստատելու ուղղությամբ: Անշուշտ, դեռևս առկա են բազմաթիվ թերություններ ու խնդիրներ, որոնց լուծումն օրվա հրամայականն է, և ցանկալի կլինեն դրանում հասարակական ավելի լայն շրջանակների ներգրավումն ու մասնակցությունը, հատկապես, կոռուպցիայի վերացմանն ուղղված միջոցառումներում: Ինչևէ, բարեփոխումների գործընթացն արդեն սկսված է, իսկ բարեփոխումների իրականացմանը եվրոպական ինստիտուտների ակտիվ մասնակցության ու կատարած ներդրումների պայմաններում, կարծում ենք, որ այդ գործընթացները կլինեն անշրջելի: